Գլ 4

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀՀ ԱԱԾ-ՏԱԿԿԳՎ-ԳՀԱՊՁԲ-1/19-ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ/6

N 11/166 -2019

ք. Երևան 28.07 2019 թ.

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը ի դեմս տնօրենի տեղակալ Ա. Հակոբյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կ. Սուքիասյանի, որը գործում ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հատցնով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

2.1.8 Ստանալ ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 4 138 710 (չորս միլիոն հարյուր երեսունութ հազար յոթ հարյուր տաս) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է

www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը

չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ԱԱԾ **ք.Երևան, Նալբանդյան 104** **ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի** **գործառնական վարչություն** **Հ/Հ 900011301067** **ՀՎՀՀ 01507079**	**«Պատրոն ՌՄ» ՍՊԸ** **ք. Երևան, Վարդանանց 18/2** **«Էվոկաբանկ» ՓԲԸ** **Հ/Հ 16600004462701 00** **ՀՎՀՀ 00861057**
Տնօրենի տեղակալ	**Տնօրեն**
Ա. Հակոբյան	**Կ. Սուքիասյան**
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«08» 07 2019 թ. կնքված
11/166-2019 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
կարիքների նախատեսված չափաքանակի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
1	30121450/10	լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ	ՉԺՀ	Քարթրիջի չիպ Ricoh SP 220SNW տպիչի համար	հատ	156	9 360	60	Ք. Երևան, Նալբանդյան 104	30	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 20 օրացուցային օրվա ընթացքում
										30	30.09.2019թ.
3	30121450/12	լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ	ՉԺՀ	Մալուխ PN-AMBM-18F, USB 2.0 A-B, տպիչների համար, 1.8մ	հատ	480	28 800	60	Ք. Երևան, Նալբանդյան 104	30	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 20 օրացուցային օրվա ընթացքում
										30	30.09.2019թ.
6	30121450/8	լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ	ՉԺՀ	Քարտրիջի չիպ Xerox 108R00909, Xerox 3140 տպիչի համար	հատ	270	5 400	20	Ք. Երևան, Նալբանդյան 104	20	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 20 օրացուցային օրվա ընթացքում
7	30121450/9	լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ	ՉԺՀ	Քարտրիջի չիպ Xerox 106R02773, Xerox 3020 տպիչի համար	հատ	600	36 000	60	Ք. Երևան, Նալբանդյան 104	30	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 20 օրացուցային օրվա ընթացքում
										30	30.09.2019թ.
8	30121480/5	լուսապատճենահանող սարքերի տոներ	ՉԺՀ	Տոներ HP LJ 1010/1012/1200/1300 տպիչների համար	կիլոգրամ	3 240	129 600	40	Ք. Երևան, Նալբանդյան 104	20	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 20 օրացուցային օրվա ընթացքում
										20	30.09.2019թ.
9	30121480/6	լուսապատճենահանող սարքերի տոներ	ՉԺՀ	Տոներ SAMSUNG ML-2160/SL-M2020/Xerox Phaser 3020 տպիչների համար	կիլոգրամ	4 530	181 200	40	Ք. Երևան, Նալբանդյան 104	20	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 20

											օրացուցային օրվա ընթացքում
										20	30.09.2019թ.
10	30121480/7	լուսապատճենահանող սարքերի տոներ	ՀԺՀ	Տոներ SAMSUNG ML-2160/SL-M2020/ scx-3400 տպիչի համար	կիլոգրամ	4 530	9060	2	Ք. Երևան, Նալբանդյան 104	2	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 20 օրացուցային օրվա ընթացքում
11	30121480/8	լուսապատճենահանող սարքերի տոներ	ՀԺՀ	Տոներ SAMSUNG ML-2160/SL-M2020/Ricoh SP 220SNW տպիչի համար	կիլոգրամ	4 530	40 770	9	Ք. Երևան, Նալբանդյան 104	4	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 20 օրացուցային օրվա ընթացքում
										5	30.09.2019թ.
12	30121480/9	լուսապատճենահանող սարքերի տոներ	ՀԺՀ	Տոներ HP LJ PRO M104/M132 տպիչի համար	կիլոգրամ	4 650	46 500	10	Ք. Երևան, Նալբանդյան 104	5	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 20 օրացուցային օրվա ընթացքում
										5	30.09.2019թ.
13	30121500/33	քարտրիջներ	ՀԺՀ	Քարտրիջ, Canon EP-26/27	հատ	2 580	77 400	30	Ք. Երևան, Նալբանդյան 104	10	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 20 օրացուցային օրվա ընթացքում
										20	30.09.2019թ.
16	30121500/36	քարտրիջներ	ՀԺՀ	Քարթրիջ HP LJ Pro MFP M225dn, HP LJ CF283A (N83A)	հատ	1 878	37 560	20	Ք. Երևան, Նալբանդյան 104	10	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 20 օրացուցային օրվա ընթացքում
										10	30.09.2019թ.
17	30121500/37	քարտրիջներ	ՀԺՀ	Քարտրիջ, HP LJ P2055dn, CE505A (N05A)	հատ	2 580	25 800	10	Ք. Երևան, Նալբանդյան 104	5	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 20 օրացուցային օրվա ընթացքում
										5	30.09.2019թ.
18	30121500/38	քարտրիջներ	ՀԺՀ	Քարտրիջ, Xerox Phaser 3140, 108R00908(108R00909)	հատ	3 600	18 000	5	Ք. Երևան, Նալբանդյան 104	5	30.09.2019թ.
19	30121500/39	քարտրիջներ	ՀԺՀ	Քարտրիջ, SAMSUNG MLT-D111S, Samsung SL-M2070/XEV	հատ	3 690	147 600	40	Ք. Երևան, Նալբանդյան 104	20	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 20

											օրացուցային օրվա ընթացքում
										20	30.09.2019թ.
21	30121500/41	քարտրիջներ	ՉԺՀ	ՈՒնիվերսալ քարթրիջ HP LJ Q2612A, Canon FX10, Canon MF4270 տպիչի համար	հատ	1 866	839 700	450	Ք. Երևան, Նալբանդյան 104	250	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 20 օրացուցային օրվա ընթացքում
										200	30.09.2019թ.
22	30121500/42	քարտրիջներ	ՉԺՀ	ՈՒնիվերսալ քարթրիջ HP LJ CB435A/36A/85A/Canon 712, 725, LBP P 1005 տպիչի համար	հատ	1 866	839 700	450	Ք. Երևան, Նալբանդյան 104	250	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 20 օրացուցային օրվա ընթացքում
										200	30.09.2019թ.
23	30121500/43	քարտրիջներ	ՉԺՀ	Քարտրիջ, XEROX 106R02183 Xerox Phaser 3010	հատ	1 140	2 280	2	Ք. Երևան, Նալբանդյան 104	2	30.09.2019թ.
24	30121500/44	քարտրիջներ	ՉԺՀ	Քարթրիջ Ricoh Aficio SP200/210 Ricoh SP 220SNW տպիչի համար, տպման ռեսուրսը 2600 էջ	հատ	4 860	291 600	60	Ք. Երևան, Նալբանդյան 104	30	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 20 օրացուցային օրվա ընթացքում
										30	30.09.2019թ.
25	30121500/45	քարտրիջներ	ՉԺՀ	Քարթրիջ HP LJ CF226X (N26X), տպելու ռեսուրսը 9000 էջ, HP LJ Pro MFP M426 տպիչի համար	հատ	6 780	339 000	50	Ք. Երևան, Նալբանդյան 104	30	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 20 օրացուցային օրվա ընթացքում
										20	30.09.2019թ.
29	30121500/49	քարտրիջներ	ՉԺՀ	Քարտրիջ XEROX 106R01379 Xerox 3100	հատ	6 780	101 700	15	Ք. Երևան, Նալբանդյան 104	5	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 20 օրացուցային օրվա ընթացքում
										10	30.09.2019թ.
32	30121500/52	քարտրիջներ	ՉԺՀ	Քարտրիջ HP LJ CE278A/Canon 728, Canon i-Sensys MF 4450	հատ	1 860	37 200	20	Ք. Երևան, Նալբանդյան 104	10	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 20 օրացուցային օրվա ընթացքում
										10	30.09.2019թ.

43	30121500/63	քարտրիջներ	ՉԺՀ	Քարթրիջ HP LJ CF217A (N17A) + թմբուկ յունիթ HP LJ CF219A (N19A), HP LJ M130A տպիչի համար	հատ	13 662	683 100	50	Ք. Երևան, Նալբանդյան 104	20	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 20 օրացուցային օրվա ընթացքում
										30	30.09.2019թ.
54	30232500/7	օպտիկական սկավառակներ	ՉԺՀ	DVD-R, 4,7 Gb, դատարկ սկավառակ, առանց տուփի	հատ	82	123 000	1 500	Ք. Երևան, Նալբանդյան 104	500	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 20 օրացուցային օրվա ընթացքում
										1 000	30.09.2019թ.
60	30237100/10	համակարգիչների մասեր	ՉԺՀ	Համակարգչի հոսանքի մալուխ PC-186-VDE եվրոպական ստանդարտ, 1.8մ	հատ	660	19 800	30	Ք. Երևան, Նալբանդյան 104	30	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 20 օրացուցային օրվա ընթացքում
61	30237100/11	համակարգիչների մասեր	ՉԺՀ	Համակարգչի հոսանքի մալուխ PC-189-VDE UPS standard, 1.8մ	հատ	670	20 100	30	Ք. Երևան, Նալբանդյան 104	30	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 20 օրացուցային օրվա ընթացքում
62	30237100/7	համակարգիչների մասեր	ՉԺՀ	Պրոցեսորի հովացուցիչ SP-407 LGA115x(51,55,56)s, 775s, սոքետների համար, 65 Վտ, 2200 պտ/ր, 92 մմ ալյումինե հովացուցիչ, 3 լար	հատ	1998	39 960	20	Ք. Երևան, Նալբանդյան 104	20	30.09.2019թ.
64	30237100/9	համակարգիչների մասեր	ՉԺՀ	USB երկարացման լար PN-AMAF18F USB 2.0 AM - AF, 1.8մ	հատ	426	8 520	20	Ք. Երևան, Նալբանդյան 104	20	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 20 օրացուցային օրվա ընթացքում

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱԱԾ
ք.Երևան, Նալբանդյան 104
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011301067
ՀՎՀՀ 01507079

Տնօրենի տեղակալ

Ա. Հակոբյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Պատրոն ՌՄ» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 18/2
«Էվոկաբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1660000446270100
ՀՎՀՀ 00861057

Տնօրեն

Կ. Սուքիասյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«08» 07 2019 թ. կնքված
11/166-2019 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Գնումների ներքին ծածկագիրը՝ ըստ հանձնարարականի	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի									
			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում									
			ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	30121450/10	լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ	0	0	0	4 815	4 815	9 360	9 360	9 360	9 360	9 360
3	30121450/12	լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ	0	0	0	14 400	14 400	28 800	28 800	28 800	28 800	28 800
6	30121450/8	լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ	0	0	0	5 400	5 400	5 400	5 400	5 400	5 400	5 400
7	30121450/9	լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ	0	0	0	18 000	18 000	36 000	36 000	36 000	36 000	36 000
8	30121480/5	լուսապատճենահանող սարքերի տոներ	0	0	0	64 800	64 800	129 600	129 600	129 600	129 600	129 600
9	30121480/6	լուսապատճենահանող սարքերի տոներ	0	0	0	90 600	90 600	181 200	181 200	181 200	181 200	181 200
10	30121480/7	լուսապատճենահանող սարքերի տոներ	0	0	0	9 060	9 060	9 060	9 060	9 060	9 060	9 060
11	30121480/8	լուսապատճենահանող սարքերի տոներ	0	0	0	18 120	18 120	40 770	40 770	40 770	40 770	40 770
12	30121480/9	լուսապատճենահանող սարքերի տոներ	0	0	0	23 250	23 250	46 500	46 500	46 500	46 500	46 500
13	30121500/33	քարտրիջներ	0	0	0	25 800	25 800	77 400	77 400	77 400	77 400	77 400
16	30121500/36	քարտրիջներ	0	0	0	18 780	18 780	37 560	37 560	37 560	37 560	37 560
17	30121500/37	քարտրիջներ	0	0	0	12 900	12 900	25 800	25 800	25 800	25 800	25 800
18	30121500/38	քարտրիջներ	0	0	0	0	0	18 000	18 000	18 000	18 000	18 000
19	30121500/39	քարտրիջներ	0	0	0	73 800	73 800	147 600	147 600	147 600	147 600	147 600
21	30121500/41	քարտրիջներ	0	0	0	466 500	466 500	839 700	839 700	839 700	839 700	839 700
22	30121500/42	քարտրիջներ	0	0	0	466 500	466 500	839 700	839 700	839 700	839 700	839 700
23	30121500/43	քարտրիջներ	0	0	0	0	0	2 280	2 280	2 280	2 280	2 280
24	30121500/44	քարտրիջներ	0	0	0	145 800	145 800	291 600	291 600	291 600	291 600	291 600
25	30121500/45	քարտրիջներ	0	0	0	203 400	203 400	339 000	339 000	339 000	339 000	339 000
29	30121500/49	քարտրիջներ	0	0	0	33 900	33 900	101 700	101 700	101 700	101 700	101 700
32	30121500/52	քարտրիջներ	0	0	0	18 600	18 600	37 200	37 200	37 200	37 200	37 200

43	30121500/63	քարտրիջներ	0	0	0	273 240	273 240	683 100	683 100	683 100	683 100	683 100
54	30232500/7	օպտիկական սկավառակներ	0	0	0	41 000	41 000	123 000	123 000	123 000	123 000	123 000
60	30237100/10	համակարգիչների մասեր	0	0	0	19 800	19 800	19 800	19 800	19 800	19 800	19 800
61	30237100/11	համակարգիչների մասեր	0	0	0	20 100	20 100	20 100	20 100	20 100	20 100	20 100
62	30237100/7	համակարգիչների մասեր	0	0	0	0	0	39 960	39 960	39 960	39 960	39 960
64	30237100/9	համակարգիչների մասեր	0	0	0	8 520	8 520	8 520	8 520	8 520	8 520	8 520

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱԱԾ
ք.Երևան, Նալբանդյան 104
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011301067
ՀՎՀՀ 01507079

Տնօրենի տեղակալ

Ա. Հակոբյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Պատրոն ՌՄ» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 18/2
«Էվոկաբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1660000446270100
ՀՎՀՀ 00861057

Տնօրեն

Կ. Սուքիասյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն